ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-150-21.11.2012-ԳԲ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվական դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 61-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի սանկցիայի «ութսունապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով, իսկ «հարյուրհիսունապատիկի» բառը՝ «երեքհարյուրապատիկի» բառով.
2. 3-րդ մասի սանկցիայի «հարյուրհիսունապատիկի» բառը փոխարինել «երեքհարյուրապատիկի» բառով.
3. 4-րդ մասի սանկցիայի «ութսունապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով, իսկ «հարյուրհիսունապատիկի» բառը՝ «երեքհարյուրապատիկի» բառով:

Հոդված 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 62-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի սանկցիայի «ութսունապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով, իսկ «հարյուրհիսունապատիկի» բառը՝ «երեքհարյուրապատիկի» բառով.
2. 2-րդ մասի սանկցիայի «ութսունապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով, իսկ «հարյուրհիսունապատիկի» բառը՝ «երեքհարյուրապատիկի» բառով:

Հոդված 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 63.2-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի սանկցիայի «ութսունապատիկի» բառը փոխարինել «հարյուրհիսունապատիկի» բառով, իսկ «հարյուրհիսունապատիկի» բառը «երեքհարյուրապատիկ» բառով.
2. 2-րդ մասի սանկցիայի «հիսունապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով, իսկ «հարյուրապատիկի» բառը՝ «երկուհարյուրապատիկի» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծի վերաբերյալ առաջարկությունների

Հ/Հ	**Առաջարկության հեղինակը**	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**
1	2	3	4
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների կետերի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:	Ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ հոդվածով. «**Հոդված 3.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 63.2-րդ հոդվածում՝ 1. 1-ին մասի սանկցիայի «ութսունապատիկի» բառը փոխարինել «հարյուրհիսունապատիկի» բառով, իսկ «հարյուրհիսունապատիկի» բառը «երեքհարյուրապատիկ» բառով. 2. 2-րդ մասի սանկցիայի «հիսունապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով, իսկ «հարյուրապատիկի» բառը՝ «երկուհարյուրապատիկի» բառով:»	Ընդունված է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: